ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ՎՐԱՑ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ավարտվեց վրացական ժամանակակից երաժշտության եռօրյա փառատոնը Հայաստանում: Հիշեցնենք, որ նման փառատոներ պարբերաբար անցկացվում էին խորհրդային ժամանակներում եւ ահա արդեն քառորդ դար է, ինչ այդ ողջունելի ավանդույթը չէր վերականգնվում:

Հայաստանի Կոմպոզիտորների միությունը՝ (նախագահ՝ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, կոմպոզիտոր Արամ Սաթյան), Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ, հիմնովին նախապատրաստվել էր վրացական արդի երաժշտության փառատոնի անցկացմանը: Նշենք, որ փառատոնի անցկացման նախաձեռնությամբ հանդես է եկել Վրաստանի հայ երաժիշտների լիգան (նախագահ՝ Արտեմ Կիրակոզով): Վրաստանի պատվիրակության կազմում էին կոմպոզիտորներ Վաժա Ազարաշվիլին, Մակա Վիրսալաձեն, Օթար Թաթիշվիլին, Իրակլի Ցինցաձեն եւ ուրիշներ:

Ընդհանրապես, Հայաստանի եւ Վրաստանի երգահանների միջեւ ստեղծագործական եւ բարեկամական կապը վաղեմի պատմություն ունի: Ալեքսանդր Սպենդիարովից ու Զաքարիա Փալիաշվիլուց բարեկամական էստաֆետան շարունակեցին Էդուարդ Միրզոյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Առնո Բաբաջանյանը, Էմիլ Արիստակեսյանը, ովքեր բարեկամական սերտ կապեր ունեին Դավիթ Թորաձեի, Սուլխան Ցինցաձեի, Ֆելիքս Ղլոնտու եւ շատերի հետ: Մշակույթի գործիչների ստեղծագործական կապերը փոխհարստացնում էին արհեստավարժների միջեւ փորձի փոխանակումը, որոնք աչքի էին ընկնում ազգային ինքնությամբ, խթանում էին հասարակության մտավոր ու հոգեւոր զարգացումը:

Հայաստանում հյուրերը եղան Դիլիջանի ստեղծագործողների տանը: Վրաց երաժշտության բոլոր համերգները լեփ-լեցուն հանդիսատեսով անցկացվեցին Դիլիջանի ու Գյումրիի երաժշտական քոլեջներում, եզրագիծը հատելով Երեւանի Կոմիտասի անվան համերգասրահում:

Հայ երաժշտագետներն ու շարքային ունկնդիրները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին վրաց հյուրերի ստեղծագործության նկատմամբ: Հայ երաժիշտների կատարմամբ հնչեցին Վաժա Ազարաշվիլու դաշնամուրային մինյատյուրները եւ Օթար Թաթիշվիլու սոնատը, ջութակի, ֆլեյտայի ու դաշնամուրի համար գրված Կախի Ցաբաձեի սկորցոն, Զուրաբ Նադարեիշվիլու եւ Գիորգի Շավերզաշվիլու լարային կվարտետները, Օմար Մինդորաշվիլու փողային եռյակը, Իրակլի Ցինցաձեի փողային քառյակի համար մինյատյուրները, Մակա Վիրսալաձեի «Հիշողություն» գործիքային պիեսը: Հյուրերն առանձնակի նշեցին հայ երաժիշտների կողմից երգահանի մտածելակերպի մեջ ներթափանցելու գործում ցուցաբերած բարձր արհեստավարժությունը:

Այցի շրջանակներում հյուրերը եղան թանգարաններում, այցելեցին հիշարժան վայրեր: Ինչպես նշեցին հայ ու վրաց կոմպոզիտորները, սույն այցը դարձավ երկու երկրների կոմպոզիտորների եւ երաժիշտների միջեւ բարեկամության նոր փուլի մեկնարկը:

ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԳՈՒԳՈՒԼԻ ՄԱՂՐԱՁԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՎ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Վրաստանի խորհրդարանի եվրահինտեգրման կոմիտեի առաջին փոխնախագահ Գուգուլի Մաղրաձեն, «Եվրահինտեգրման գործընթացի աջակցությունը Քվեմո Քարթլիում, Ջավախեթիում եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում» նախագծի շրջանակներում, հանդիպում ունեցավ Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման կազմակերպիչն էր Վրաստանի ռազմավարության եւ միջազգային հարաբերությունների ուսումնասիրության հիմնադրամը:

Հանդիպմանը խոսվեց Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ընթացիկ հարաբերությունների, նաեւ՝ մինչեւ Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրումը եւ ստորագրումից հետո առկա գլխավոր մարտահրավերների ու սպասումների մասին: Քննարկման գլխավոր թեման Վրաստանի եվրոպական ընտրությունն էր ու այդ ընտրության զարգացման հեռանկարները: Գուգուլի Մաղրաձեն խոսեց եվրոպական եւ եվրատլանտյան տարածքում Վրաստանի միտման ու եվրոպական տարածքում Վրաստանի դիրքի նշանակության մասին: Եվրահինտեգրման կոմիտեի առաջին փոխնախարարը ներկաների ուշադրությունը բեւեռեց Եվրամիության մերձեցման ուղու, մինչեւ ասոցիացման համաձայնագրի ստորագրումը եւ դրանից հետո առկա գլխավոր մարտահրավերների ու սպասումների, Եվրամիության առջեւ ստանձնած պարտավորությունների, անցած ժամանակահատվածում ձեռք բերած առաջընթացի ու բարդությունների վրա: Նա հետաքրքրվեց տեղի ոչ կառավարական կազմակերպությունների կողմից Եվրամիության վերաբերյալ քաղաքացիների տեղեկատվության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացված միջոցառումների հարցում: Ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, հանդիպմանն առանձնակի ընդգծեցին տարածաշրջաններում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների հետ անմիջական հանդիպման եւ երկխոսության իրականացման կարեւորությունը: «Կարեւորագույն նշանակություն ունի, երբ մարդիկ տեղեկատվություն ստանում են առաջին աղբյուրից, ինչն է՛լ ավելի է բարձրացնում վստահությունը դրանց նկատմամբ»,- նշվեց հանդիպմանը:

Գուգուլի Մաղրաձեն կարեւորեց նման հանդիպումների կարեւորությունը, նշելով, որ առանձնակի նշանակալից է, երբ մարդկանց մոտ կայուն կարծիք է ձեւավորվում եւ վստահություն, որ Վրաստանը եվրոպական ուղուց բացի, զարգացման այլ հեռանկար չունի: «Մենք աշխատում ենք եւ կշարունակենք աշխատել, որպեսզի մարդիկ հասկանան, որ եվրոպական ընտրությունը յուրաքանչյուրիս համար է եւ դա նորմալ ապրելաձեւի ընտրություն է: Դուք այն միջակա օղակն եք, որն անհամեմատ ավելի տեղեկացված է, թե, Վրաստանի համար, ինչ է նշանակում եվրոպական ինտեգրումը: Մենք պատրաստ ենք հանդիպել բնակիչների հետ ու ձեզ հետ միասին խոսել բոլոր այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում են մարդկանց, որպեսզի նրանց մոտ հստակ պատկերացում ստեղծվի Վրաստանի համար Եվրոպայի նշանակության վերաբերյալ»,- հանդիպմանը հայտարարեց Գուգուլի Մաղրաձեն:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ Ո՞ՒՄ ԴԻՄԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

- Այժմ անդրադառնանք Վրաստանի քաղաքացություն ստանալու թեմային: Ինչպե՞ս է տեղի ունենում Վրաստանի քաղաքացության ստացումը:

- Համաձայն Սահմանադրության, Վրաստանի քաղաքացիության ստացումը տեղի է ունենում ի ծնե կամ հպատակագրմամբ:

Ի ծնե Վրաստանի քաղաքացիություն տրվում է. անձին, ում ծնվելու պահին նրա ծնողներից մեկը Վրաստանի քաղաքացի է, Վրաստանում առանց քաղաքացիության անձի կարգավիճակ ունեցողի զավակին, որը ծնվել է Վրաստանի տարածքում, Վրաստանի տարածքում ծնված անձին, որի ծնողներից մեկը Վրաստանում առանց քաղաքացիության կարգավիճակ ունեցող անձ է, իսկ երկրորդ ծնողը՝ անհայտ է:

Ինչ վերաբերում է հպատակագրմամբ Վրաստանի քաղաքացիության տրմանը, ապա սովորական կարգով Վրաստանի քաղաքացիություն է տրվում այն անձին, որը վերջին 5 տարիների ընթացքում օրինականորեն անընդմեջ ապրում է Վրաստանի տարածքում եւ սահմանված շրջանակներում տիրապետում է պետական լեզվին, գիտի երկրի պատմությունն ու իրավական հիմնական դրույթները, միաժամանակ՝ ունի աշխատանք կամ անշարժ գույք, կամ արտադրական գործունեություն է իրականացնում, Վրաստանում գրանցված արտադրությունում փայատեր է կամ բաժնետեր:

Ասեմ նաեւ, որ Վրաստանի քաղաքացու հետ ամուսնացած անձը, ով օրինական կարգով անընդմեջ ապրում է Վրաստանում՝ մինչեւ դիմումի ներկայացման օրը վերջին 2 տարվա ընթացքում, Վրաստանի քաղաքացիությունը դյուրացված կարգով կշնորհվի, եթե նա սահմանվածի շրջանակներում տիրապետում է Վրաստանի պետական լեզվին, Վրաստանի պատմությանը եւ իրավական հիմնական դրույթներին:

- Իսկ ո՞ր մարմինն է ստուգում լեզվի, պատմության եւ իրավական հիմունքների իմացության մակարդակը:

- Վրաստանի պետական լեզվի, Վրաստանի պատմության եւ իրավական հիմնական դրույթների իմացության մակարդակի ստուգումը իրականացնում է նախարարության քաղաքացիական հարցերով հանձնաժողովը՝ թեստավորման միջոցով:

- Շատերի առջեւ ծառացած է Վրաստանի քաղաքացիության վերականգնման հարցը: Դա ինչպե՞ս է իրականացվում:

- Վրաստանի քաղաքացիություն վերականգնման կարգով շնորհվում է այն անձին, ում Վրաստանի քաղաքացիությունն ընդհատվել է անօրինականորեն, Վրաստանի քաղաքացիությունից դուրս գալով, ծնողի կամ ծնողների ընտրության արդյունքում (միայն չափահասության հասնելուց հետո):

Ավելացնեմ, որ վերականգնման կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհման համար օտարերկրյա քաղաքացիները, սահմանվածի շրջանակներում, պետք է տիրապետեն Վրաստանի պետական լեզվին:

- Ասում են, որ քաղաքացիությունը շնորհվում է նաեւ բացառիկ կարգով: Ինչպե՞ս է տեղի ունենում այդ գործընթացը եւ, ո՞ւմ կարող է այն առնչվել:

- Այո, բացառության կարգով Վրաստանի քաղաքացիություն կարող է շնորհել Վրաստանի նախագահը օտարերկրյա քաղաքացուն, ով Վրաստանի առջեւ ունի բացառիկ ծառայություն կամ, ում Վրաստանի քաղաքացիության շնորհումը ելնում է պետական շահերից:

Բացառության կարգով Վրաստանի քաղաքացիության ստացման համար պետք է դիմել ՀԻԻԱ «Պետական սպասարկումների զարգացման գործակալության» տարածքային ծառայությանը, Արդարադատության տներին՝ ինչպես Թբիլիսիում, այնպես էլ տեղերում, հասարակական կենտրոնին, Վրաստանում գործող արտասահմանյան դեսպանությունների կամ հյուպատոսությունների ներկայացուցչությանը, հյուպատոսական հաստատությանը, նաեւ՝ գործակալության օնլայն ծառայությանը. skype: sda.ge, հեռ. 032 240 10 10

Ինչ վերաբերում է բացառության կարգով քաղաքացիության ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերին, ապա դիմումի հետ պետք է ներկայացվեն ծննդյան վկայականի պատճենը (միայն այն դեպքում, եթե քաղաքացիություն ստանալ ցանկացող անձը ծնվել է արտասահմանում եւ ունի վերոնշյալ փաստաթուղթը), անձնագիրը կամ քաղաքացիության եւ անձը հաստատող այլ փաստաթուղթ, երկու լուսանկար, Վրաստանի քաղաքացու կամ Վրաստանում գրանցված իրավաբանական անձի առնվազն երկու երաշխավորագիրը օտարերկրյա քաղաքացուն Վրաստանի քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ, սակագնի վճարումը հաստատող կտրոնը:

Անչափահաս անձի դեպքում պարտադիր կարգով ներկայացվելու են ծննդյան վկայականն ու ծնողների համաձայնությունը:

Ասեմ նաեւ, ինչ վերաբերում է քաղաքացիության շնորհման մասին նախագահական հրամանագրի ուժի մեջ մտնելու ժամկետներին, ապա, սովորական, դյուրացված եւ վերականգնման կարգով այլ երկրի քաղաքացուն Վրաստանի քաղաքացիություն շնորհելու դեպքում, հրամանագիրն ուժի մեջ է մտնում Վրաստանի իրավասու մարմինների կողմից այդ անձի՝ այլ երկրի քաղաքացիությունից դուրս գալը հաստատող փաստաթղթի ստացումից անմիջապես հետո:

Նշեմ նաեւ, որ Վրաստանի քաղաքացիներ, բացի այն անձանցից, ովքեր վերոնշյալ կարգով ստացել կամ ստանալու են Վրաստանի քաղաքացիություն, համարվում են. մինչեւ 1975 թվականի մարտի 31-ը ծնված անձինք, ովքեր Վրաստանում ապրում են, ընդհանուր առմամբ, առնվազն 5 տարվա ընթացքում, 1993 թվականի մարտի 31-ի հաշվով գտնվում էին Վրաստանի տարածքում եւ, ովքեր չեն ստացել այլ երկրի քաղաքացիություն, Վրաստանի տարածքում ծնված անձինք, ովքեր 1993 թվականի մարտի 31-ի հաշվով ապրում էին Վրաստանում եւ, ովքեր չեն ստացել այլ երկրի քաղաքացիություն, Վրաստանի տարածքում ծնված անձինք, ովքեր 1991 թվականի դեկտեմբերի 21-ից հետո հեռացել են Վրաստանի տարածքից եւ այդպիսով չեն բավարարում առաջին երկու կետերի պահանջներին, եթե նրանք չեն ստացել այլ երկրի քաղաքացիություն:

- Իսկ ի՞նչ կասեիք բացառության կարգով Վրաստանի քաղաքացիություն շնորհելու համար սահմանված ժամկետների ու սակագների մասին:

- Բացառության կարգով 30 օրվա ընթացքում քաղաքացիության ստացման սակագինը կազմում է 500 լարի, 60 օրվա ընթացքում հարցի կարգավորման համար հարկ է մուծել 350 լարի, իսկ 80 օրում կարգավիճակը ստանալու համար կպահանջվի 250 լարի:

- Եթե կարելի է, մի քանի խոսք՝ քաղաքացիության հաստատման, վերականգնման կարգով քաղաքացիության շնորհման, սովորական կամ դյուրացված կարգով քաղաքացիության շնորհման փաստաթղթի ստացման ժամկետների ու սակագնի մասին:

- Վրաստանի քաղաքացիության հաստատումը նույն օրում ստանալու համար, պետք է մուծել 75 լարի, փաստաթուղթը երեք օրում ստանալը արժե 50 լարի, 5 օրում՝ 30 լարի, իսկ սովորականի ընթացքում 15 օրում՝ անվճար:

Վերականգնման կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհման փաստաթուղթը 20 օրում ստանալու գործընթացն արժե 150 լարի, իսկ 30-րդ օրը դրա ստացման սակագինը կազմում է 100 լարի:

Ինչ վերաբերում է սովորական կամ դյուրացված կարգով Վրաստանի քաղաքացիության շնորհման փաստաթղթի ստացմանը, ապա, 20-րդ օրը այն ստանալու համար պետք է վճարել 300 լարի, 40 օրվա հաշվարկով՝ 200 լարի, 60 օրվա հաշվարկով՝ 100 լարի եւ 80-րդ օրը քաղաքացիության շնորհման փաստաթղթի ստացման սակագինը 50 լարի է:

Ð²ðò — ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

Ð²î²ä

Ո՞ՒՐ ԳՆԱԼ ՀԱՆԳՍՏԱՆԱԼՈՒ

Ամեն տարի, ամռան գալու պես, մեր ընտանիքի կարեւորագույն խնդիրներից մեկը «Ուր գնալ հանգստանալու» հարցն է: Դժվար է նախապատվությունը տալ կոնկրետ որեւէ հանգստավայրին, առավել եւս, եթե մանրամասներից անտեղյակ ես: Գուցե դուք օգնեք:

Պ.Սիմոնյան

Նինոծմինդա

Հավերժ հարց, որ կրկնվում է ամեն տարի գարնան վերջին կամ ամառվա ընթացքում՝ «Ուր գնալ հանգստանալու այս տարի»: Եվ այդ հարցին պատասխան. մեր բազմաթիվ տուրիստական ընկերություններն արդեն սկսել են իրենց ակտիվ գովազդարշավները, մեզ համոզելով այցելել Քոբուլեթի, Բաթումի, Ուրեկի, կամ Եգիպտոս, կամ Անթալիա: Իսկ նոր տուրիստական սեզոնը Վրաստանում բնորոշվում է, նախորդ տարիների համեմատ, շուկայի կառուցվածքի կտրուկ փոփոխմամբ: Պատճառները մի քանիսն են, նախ այս հանգամանքը բացատրվում է մի շարք երկրներում պատերազմական լարված իրավիճակների, տարերային աղետների, հեղաշրջումների առկայությամբ: Այդպիսի ֆորս մաժորային իրավիճակների արդյունքում, օրինակ, գրանցվել է Եգիպտոս մեկնող տուրիստների հոսքի կտրուկ անկում, իսկ Եգիպտոսը առանձնահատուկ բարձր պահանջարկ էր վայելում մեր զբոսաշրջիկների մոտ, որպես համեմատաբար մատչելի ծովափնյա հանգստի ուղղություն: Այս տարի նույնպես ակտուալ ուղղություններ են համարվում Թուրքիան՝ մասնավորապես Անթալիան, Թունիսը՝ Մահդիա, Համամետ, Սուս: Թեպետ հարկ է նշել, որ մեր, ինչպես նաեւ հայաստանցի զբոսաշրջիկները, բոլոր դեպքերում առավելությունը տալիս են վրացական հանգստավայրերին, որոնք ոչ միայն մատչելի են, այլեւ դրանցում բոլոր պայմաններն ստեղծված են նորմալ հանգստի, լիցքաթափման համար:

² è àÔæàôÂÚàôÜ

ՆԱԽԱՃԱՇԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Նախաճաշելու սովորություն չունեմ, թեպետ ամեն առավոտ տանեցիները սփիպում են, որ թեկուզ թեթեւակի նախաճաշեմ: Ասում են, սոված դուրս գալը վտանգավոր է: Իրոք դա այդպե՞ս է:

Գ.Կիրակոսյան

Բորժոմի

Նախաճաշից հրաժարվելը կարող է քառակի ավելացնել ճարպակալման, հետեւաբար նաեւ կաթվածի վտանգը: Նախաճաշը նվազեցնում է սրտի հիվանդությունների, կաթվածի. շաքարախտի, աղիքներում պոլիպների եւ հաստ աղիքի քաղցկեղի առաջացման վտանգը: Հասուն մարդուն առավոտյան անհրաժեշտ է ընդունել առնվազն 6 գ բջջանյութ, որն առկա է ծավարեղենում, մրգերում, բանջարեղենում:

Նախաճաշին շիլա ուտելը ճիշտ մոտեցում է աղեստամոքսային տրակտատի աշխատանքն սկսելու տեսանկյունից: Գիտնականները նշում են, որ բուտերբրոդների համար նախընտրելի են տարեկանի չմաղած ալյուրից պատրաստված գորշ ու սեւ հացը: Չու պետք է հաճախ չուտել, նախընտրելի է՝ երկրորդ կամ ավելի ուշ նախաճաշի ժամանակ:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ՊԱՐԶԵԼ ԵՆ, ՈՐ ԿԱՆԱՅՔ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑԻՑ ԱՎԵԼԻ ԵՆ ԱՊՐՈՒՄ

Աշխարհի բոլոր երկրներում կանայք տղամարդկանցից զգալիորեն ավելի երկար են ապարում ոչ թե ռիսկի ու վնասակար սովորությունների հակում ունենալու պատճառով, այլ ինֆարկտի եւ սրտի եւ անոթների այլ ճակատագրական հիվանդությունների նկատմամբ նախահակվածություն ունենալու պատճառով: Այդ մասին նշված է Proceedings of the National Academy of Sciences. հանդեսում:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) վիճակագրության՝ այսօրվա դրությամբ մարդու կյանքի միջին տեւողությունը կազմում է 71 տարի: Աշխարհի բոլոր երկրներում՝ Աֆրիկայի ամենաաղքատ երկրներից մինչեւ Եվրոպայի ամենահարուստ երկրները, կանանց կյանքի տեւողությունը կայուն կերպով մնում է ավելի բարձր, քան տղամարդկանցը՝ 73 տարի 68 տարվա դիմաց:

Ինչպես նշել է Լոս Անջելեսի (ԱՄՆ) Հարավային-Կալիֆոռնիայի համալսարանի ծերաբան էյլին Քրիմինսը, գիտնականներն առայժմ չգիտեն, թե ճշտորեն ինչի հետ է կապված այս ֆենոմենը եւ ինչու է այն դրսեւորվում անկախ առողջապահության եւ եկամուտների մակարդակից: Այնուամենայնիվ, նրանց մեծ մասը կարծում է, որ այդ «անհամապատասխանությունն» առաջացել է այն պատճառով, որ տղամարդիկ ավելի հաճախ ու ավելի շատ են ծխում եւ խմում ու ավելի են հակված դեպի ռիսկը, քան կանայք, ինչը կրճատում է նրանց կյանքի միջին տեւողությունը:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

ԵԹԵ ԵՐԿԱՐ ԵՔ ՆՍՏՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԱՌՋԵՎ

Այսօր համակարգիչը մեր անբաժան ու հավատարիմ ընկերը լինելով հանդերձ, մեծապես վնասում է մեր տնտեսությունը: Ի՞նչ պետք է անել այդ վնասը նվազագույնի հասցնելու համար:

Նախ, աշխատելիս պետք է պահպանել նվազագույնը 50 սմ տարածություն, եւ լուսավորությունը պետք է բավարար լինի: Բացի այս երկու պայմաններից, շատ օգտակար են այն վարժությունները, որոնք կառաջարկենք ձեզ:

Մի վարժությունից մյուսին անցնելուց առաջ պետք է աչքերը փակել եւ մի փոքր հանգստանալ: Վարժությունները պետք է կատարել առանց ակնոցի:

1. Աչքերը 3-5 վայրկյան ամուր կկոցեք, հետո՝ կրկին 3-5 վայրկյան լայն բացեք: Գործողությունը կրկնեք 7 անգամ:

2. Երկու րոպե տեւողությամբ կոպերը հաճախակի թարթեք՝ պատկերացնելով, թե ինչպես է թիթեռն իր գեղեցիկ թեւերը թափահարում:

3. Աչքերը փակեք ու փորձեք դրանցով տարբեր պատկերներ «նկարել» ութանկյուն, շրջան, խորանարդ, կամ պարզապես աչքերը մի անկյունից (օրինակ, վերեւի աջ անկյունից) տեղափոխեք մեկ այլ անկյուն (օրինակ, ներքեւի ձախ անկյուն): Այս վարժությունը կրկնեք 2 րոպե:

4. Մատների թմբիկներով 15 վայրկյան թեթեւակի սեղմեք փակ կոպերը: Փոքրիկ ընդմիջումներով կրկնեք 5 անգամ:

5. Նայեք տարբեր հեռավորությունների վրա գտնվող որեւէ առարկայի, այնուհետեւ հայացքը տեղափոխեք մեծ հեռավորության վրա գտնվողի վրա, իսկ վերջում նայեք պատուհանից դուրս՝ դեպի անսահմանություն: Նույնը կրկնեք հակառակ հաջորդականությամբ:

Ա վիտամինի գործածումը նպաստում է աչքերի առողջության վերականգնմանը, իսկ դրա պակասը հանգեցնում է հավկուրության: Օգտագործեք գազար, դդում, լոլիկ, քաղցր տաքդեղ, կաղամբ, սպանախ, լոբի, կանաչ ոլոռ, ձկան յուղ, հավկիթ, կաթ, կարագ, լյարդ:

Բ2 վիտամինն աչքի ցանցաթաղանթը պաշտպանում է ուլտրամանուշակագույն ճառագայթներից, նպաստում է աչքի բջիջների նորմալ կենսագործունեությանը: Օգտագործեք լյարդ, հավկիթ, կաթնամթերք, լոբազգիներ, կաղամբ, սպանախ, սխտոր, լոլիկ, ծիրան, մասուր:

Բ5 վիտամինը կարգավորում է նյութափոխանակությունը: Օգտագործեք կաթնաթթվային մթերքներ, միս, լյարդ, երիկամներ, ձուկ, հավկիթ, լոբի, սիսեռ, սունկ, ճակնդեղ, ծաղկակաղամբ, սխտոր:

Ց վիտամինը նպաստում է վնասված լորձաթաղանթների վերականգնմանը: Օգտագործեք թարմ կանաչեղեն, հաղարջ, չիչխան, սխտոր, մասուր, կիվի, ցիտրուսային մրգեր:

Դ վիտամինն անհրաժեշտ է Ա վիտամինը, կալցիումը եւ ֆոսֆորը յուրացնելու համար, նաեւ այն նպաստում է կոնյուկտիվիտի բուժմանը: Օգտագործեք ձկնեղեն, կաթնամթերք, սխտոր:

Է վիտամինը նպաստում է օրգանիզմի հարստացմանը թթվածնով: Սեւ հաղարջ, կարտոֆիլ, խնձոր, խաղող հաճախակի օգտագործելով ձեր օրգանիզմին կմատակարարեք կալիումի անհրաժեշտ քանակություն:

ՆԿԱՐՆԵՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Բնակարանի գեղագիտական ձեւավորման ժամանակ որպես դեկորատիվ զարդարանք կարեւոր նշանակություն ունեն նկարները: Որպեսզի դրանք գեղեցիկ դիտվեն, պետք է թեման, տրամադրությունը եւ տեսքը համահունչ լինեն սենյակի ընդհանուր ոճին ու մթնոլորտին: Պետք է ճշգրիտ գնահատել սենյակի բնույթը, որպեսզի նկարը դրան համապատասխան ընտրվի՝ յուղաներկ կամ ջրաներկ, կոլաժ կամ գծանկար: Հնարավոր է, որ յուրատեսակ, որակյալ մի քանի լուսանկարների շարքը շատ ավելի գեղեցիկ դիտվի տվյալ սենյակում, քան, ասենք, որեւէ թանկարժեք նկարի բնօրինակը: Այս պարագայում հաշվի է առնվում ոչ թե նկարի արժեքավոր լինելը, այլ այն ամբողջական տպավորությունը, որը պայմանավորված է ընդհանուր պատկերով եւ տիրող մթնոլորտով: Նկարով ձեւավորումը, որոնք կարելի է հաճախակի փոփոխել, շատ ավելի կիրառական է երիտասարդների եւ երեխաների սենյակներում, քանի որ նրանք այդ կերպ արտահայտում են իրենց հետաքրքրությունները ու տրամադրությունները:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Չլինեին վատ մարդիկ, քեն ու դավեր, կռիվներ, մարդ ավելի երջանիկ եւ բախտավոր կլիներ...

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ
(ծնվ.1936թ.)
Հայ բանաստեղծ

Չկա մի այլ կարողություն, որ լավ լինի մարդու խելքից:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ
(1705-1791)
Վրաց բանաստեղծ

Կինը միայն երկու հավատարիմ պաշտպան ունի՝ իր ամուսինն ու դագաղը:

ՀԻՊՈԿՐԱՏ
(մ.թ.ա. 460-մ.թ.ա. 356)
Հնադարյան հույն բժիշկ

Յուրաքանչյուր լուսաբաց դիմավորիր որպես կյանքիդ սկիզբ, իսկ յուրաքանչյուր մայրամուտ՝ որպես կյանքիդ ավարտ: Եվ այդ կարճ կյանքերից յուրաքանչյուրը նշանավորիր որեւէ բարի գործով, որեւէ հաղթանակով կամ գիտելիքի ձեռքբերմամբ:

ՋՈՆ ՌԵՍԿԻՆ
(1819-1900)
Անգլիացի արվեստաբան

Երկար է միայն այն աշխատանքը, որը մենք չենք վճռում ձեռնարկել:



ԲՈԴԼԵՐ
(1821-1867)
Ֆրանսիացի բանաստեղծ

Եթե դու ժպտաս, կժպտամ նաեւ ես: Եվ ամենեւին կարեւոր չէ՝ դո՞ւ կտեսնես իմ ժպիտը, թե՞ ես՝ քոնը: Չէ՞ որ կարեւորն այն չէ, թե մենք ինչ ենք տեսնում: Շատ ավելի կարեւոր է, թե մենք ինչ ենք զգում:

Մ.Ղազարյան
«Վրաստանի» ընթերցող

²ÜºÎ¸àÎÜºð

** Ինչո՞վ է տարբերվում ամուրի տղամարդը ամուսնացածից: Ամուրին տան գործերն ինքն է կամավոր անում, իսկ ամուսնացածին դա ստիպում է անել կինը:*

** - Հայրի՛կ, բոլոր հեքիաթնե՞րն են սկսվում «լինում է չի լինում» խոսքերով:*

- Չէ, բալե՛ս, ամենալավ հեքիթները սկսվում են՝ «Եթե ընտրություններում դուք ձեր ձայնը տաք ինձ» խոսքերով:

** - Մայրի՛կ, հիշում ես այն ճենապակե սկահակը, որ ասում էիր՝ մեր գերդաստանում սերնդից սերունդ է փոխանցվել:*

- Իհարկե՛, իսկ ինչ է պատահել:

- Իմ սերունդն այն կոտրեց:

** - Ինչպե՞ս ես սովորում,- հարցնում է հյուրը տղային:*

- Չգիտեմ:

- Իսկ ինչպիսի՞ թվանշաններ ես ստանում:

- Անարդարացի:

** - Մայրի՛կ, դպրոցից գալիս ընկա ցեխը,- ասաց Արմենը:*

- Ինչպես, նոր շալվարո՞վ:

- Այո՛: Այնքան արագ կատարվեց, որ չհասցրի շալվարս հանեմ:

** Երկու հոգեբան զրուցում են:*

- Լսի, այն պարանոյիկ այցելուդ ինչպե՞ս է:

- Ո՞ր մեկը:

- Դե, որ մտածում էր, թե իրեն հետեւում են մարդասպանները:

- Պատկերացնո՞ւմ ես, համարյա բուժել էի, այն էլ սպանեցին:

** Կինը գալիս է հոգեբանի մոտ:*

- Բժի՛շկ, ամուսինս արդեն երկու տարի է չի աշխատում: Խմում է, ծեծում է ինձ, անկարգություններ է անում, տնից ամեն ինչ տանում է՝ խմում, տանը ոչինչ չի անում, դավաճանում է ինձ, ալկոհոլիկներին եւ իր «ընկերուհիներին» տուն բերում, իսկ վերջերս հեռացավ ինձնից: Բժի՛շկ, ինչպե՞ս վերադարձնեմ նրան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԸՆՏՐԻ ԸՆՏՐԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ՅՈԹԱՄՅԱ ԺԱՄԿԵՏՈՎ, ԻՍԿ ԱԺ-Ն ԿՁԵՎԱՎՈՐՎԻ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՅՈԹ ԳԼՈՒԽՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) փորձագետների հետ քննարկումների արդյունքներով՝ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը հուլիսի 10-ի, 13-ի, 14-ի եւ 15-ի հերթական նիստերի ընթացքում լրամշակեց Սահմանադրության 1-7-րդ գլուխները: Սահմանադրության նշված գլուխների նախագծի նախնական տարբերակը հանրային քննարկումների համար հրապարակվել է՝ տեղադրվելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում: Նախագծի վերաբերյալ առաջարկությունները կարող են ուղարկվել հանձնաժողովի քարտուղարությանը՝ handznajoghovi-qartugharutyun@moj.am էլեկտրոնային հասցեով:

Սահմանադրության 1-7 գլուխների նախնական տարբերակով առաջարկվում է, որ Ազգային ժողովը կազմվի առնվազն 101 պատգամավորից, ԱԺ-ն ընտրվի համամասնական ընտրակարգով, որը պետք է երաշխավորի կայուն խորհրդարանական մեծամասնության ձեւավորումը:

Միաժամանակ, սահմանվում է, որ ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունները եւ կուսակցությունների դաշինքները պարտավոր են ներկայացնել վարչապետի թեկնածությունը եւ կառավարության ծրագրի հիմնադրույթները: ԱԺ-ն ընտրվելու է 5 տարի ժամկետով:

Առաջարկների 5-րդ գլուխը, որը վերաբերում է Հանրապետության նախագահին եւ նրա լիազորություններին, նախատեսում է, որ նախագահը պետք է ընտրվի 7 տարի պաշտոնավարման ժամկետով: Նույն անձը նախագահ կարող է ընտրվել միայն 1 անգամ՝ ի տարբերություն գործող Սահմանադրության, որի դեպքում սահմանափակումը վերաբերում է երկու անգամից ավելի անընդմեջ պաշտոնավարելուն: Միեւնույն ժամանակ, նախատեսվում է, որ հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որեւէ կուսակցության անդամ:

Նախնական տարբերակով առաջարկվում է նաեւ, որ նախագահն ընտրվի Ընտրիչների ժողովի կողմից, ոչ թե քաղաքացիների կողմից ուղիղ քվեարկությամբ: Ընդ որում, Ընտրիչների ժողովը կազմված պետք է լինի Ազգային ժողովի պատգամավորներից եւ Ազգային ժողովի պատգամավորների թվին հավասար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց կազմից ընտրված ներկայացուցիչներից: Նախատեսվում է, որ Ընտրիչների ժողովը գումարվելու է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեսուն, եւ ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում:

Կառավարությունը բաղկացած է վարչապետից, փոխվարչապետերից ու նախարարներից: Նախնական տարբերակով՝ հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը սկսվելուց հետո՝ եռօրյա ժամկետում վարչապետ է նշանակում ԱԺ ընտրություններում հաղթած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ներկայացրած վարչապետի թեկնածուին: Միաժամանակ, նախատեսվում է, որ նախարարությունների թիվը չի կարող գերազանցել 18-ը:

40 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Եվրասիական բանկը Հայաստանի ոռոգման համակարգի արդիականացման համար 40 միլիոն դոլարի ներդրումային վարկ կհատկացնի:

Եվրասիական բանկի պատվիրակությունը, Եվրասիական ֆոնդի զարգացման եւ կայունացման ծրագրերի բաժնի ղեկավար Արտակ Ազիզյանի գլխավորությամբ, քննարկումներ է անցկացրել Հայաստանի ոռոգման համակարգի արդիականցման համար ներդրումային ֆինանսավորում հատկացնելու առնչությամբ:

Քննարկումների արդյունքում՝ կողմերը մշակել են վարկային համաձայնագրի պայմանները, որոնք մոտակա ժամանակահատվածում կներկայացվեն Զարգացման եւ կայունացման Եվրասիական ֆոնդի խորհրդի հաստատմանը:

2015թ.-ի վերջին կսկսվի «Ոռոգման համակարգի արդիականացում» 5-ամյա ծրագիրը: Ծրագրի իրականացման համար Եվրասիական բանկը կհատկացնի 40 միլիոն դոլարի վարկ, եւս 10 միլիոն դոլար կհատկացնի Հայաստանի կառավարությունը: Ծրագրի շրջանակներում Հայաստանի ողջ տարածում կկառուցվեն եւ կվերականգնվեն 8 ոռոգման համակարգեր՝ 70,4 կմ երկարությամբ, 8,1 կմ երկարությամբ մայր ջրանցքներ, 54,1 կմ երկարությամբ գյուղատնտեսական ջրանցքներ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐԶԵՑՎԵՑԻՆ

Հայաստանի կառավարությունը նոր որոշմամբ էապես պարզեցրեց ուսանողների համար ուսումնական վարկերի արտոնությունները: Այդ նպատակով, գործադիրը հավանություն տվեց իր նախորդ որոշումներից մեկում փոփոխություններ կատարելու նախագծին: Եթե նախկինում վարկը տրամադրվում էր անընդմեջ 4 տրանշով, ապա հիմա նախատեսվում է դրանք տրամադրել նաեւ ընդմիջումներով, այն դեպքում, եթե ուսանողը ժամանակավորապես ընդհատում է ուսումը, օրինակ, երեխայի խնամքի համար կամ այլ աղբյուրներից ստացած կրթաթոշակի շնորհիվ ինքն է վճարում իր ուսման վարձը: Պետական եւ մասնավոր ԲՈՒՀ-երի ուսանողները պետության սուբսիդավորմամբ կարող են 10 տարով մինչեւ 1,8 մլն դրամի չափ արտոնյալ պայմաններով վարկ ստանալ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԱԶԱՏՎԵԼ Է ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ

Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանն ազատվել է արդարադատության նախարարի պաշտոնից: Ղեկավարվելով Հայաստանի Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Հայաստանի նախագահը զբաղեցրած պաշտոնից ազատել է Հայաստանի արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանին:

Հովհաննես Մանուկյանը Հայաստանի արդարադատության նախարարի պաշտոնը ստանձնել էր 2014թ. ապրիլի 30-ին: Այդ նշանակումից առաջ նա Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն էր, իսկ մինչ այդ զբաղեցրել է Հայաստանի վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնը:

Մինչ այդ նախարարի մամուլի խոսնակ Ծովինար Խաչատրյանը հաստատել էր այն լուրը, որ Հովհաննես Մանուկյանը հրաժարականի մասին դիմում էր ներկայացրել:

Նշենք, որ համացանցում իրավագետներն ու ոչ կառավարական կազմակերպությունները բարձր գնահատական տվեցին արդարադատության նախարարի պաշտոնում Հովհաննես Մանուկյանի գործունեությանն ու նրա նախաձեռնած բարեփոխումներին:

Հայաստանի Հանապետական կուսակության խոսնակ Էդուարդ Շարմազանովի խոսքերով, ՀՀԿ-ն դեռեւս չի քննարկել արդարադատության նախարարի թեկնածուի հարցը: «Երբ կուսակցությունում քննարկենք այդ հարցը, այն ժամանակ մենք կասենք, իսկ այս պահին նոր նշանակման վերաբերյալ ես ոչինչ ասել չեմ կարող: Հովհաննես Մանուկյանի մասին էլ չեմ կարող որեւէ բան ասել: Նա ազատվել է իր դիումի համաձայն»,- ասաց Շարմազանովը:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՁԱՀԸ ՎԱՌՎԵՑ ԱԽԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի պատվիրակությունը, ՀԽՀԿ նախագահ Իշխան Զաքարյանի գլխավորությամբ, հուլիսի 8-13-ին գտնվում էր Վանում:

Վանի քաղաքապետարանում պաշտոնական ընդունելության ժամանակ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահը մանրամասն ներկայացրել է մարզական խաղերի պատմությունը, անցած ուղին՝ նշելով, որ այս խաղերի կարեւոր առանձնահատկություններից մեկն էլ աննախադեպ մեծ՝ մոտ 730 հոգանոց պատվիրակության ժամանումն է Հայաստան՝ Սասուն, Մուշ, Տիգրանակերտ, Վագֆ, Բիթլիս, Դերսիմ, Մալաթիա, Վան, Սամաթիա եւ Ստամբուլ քաղաքներից:

Իշխան Զաքարյանը տեղեկացրել է նաեւ, որ, ի նշան աշխարհով մեկ սփռված հայերի միասնության, վառվելու է երեք ջահ՝ Արցախ, Սփյուռք եւ Հայրենիք եռամիասնությամբ: Առաջին երկու ջահերն արդեն վառվել են, իսկ երրորդ ջահը ծրագրված է վառել Վանա լճի Աղթամար կղզում գտնվող Սուրբ Խաչ եկեղեցում: Վանի քաղաքապետը մեծ պատիվ է համարել իրենց մասնակցությունն այդ նախաձեռնությանը եւ իր պատվիրակությամբ քաղաքի մշակութային համույթներով ուղեկցել ՀԽՀԿ պատվիրակներին Աղթամար:

Սուրբ Խաչ եկեղեցում Իշխան Զաքարյանի, Վանի քաղաքապետի եւ փոխքաղաքապետի պարզած ջահը բոցավառվել է Համահայկական խաղերի գործադիր կոմիտեի անդամների՝ եկեղեցում վառած մոմերից:

Հայաստանի պատվիրակությունն այցելել է նաեւ Բիթլիս, Տիգրանակերտ, Մուշ, Անի, Կարս:

Կարսից պատվիրակությունն ուղեւորվել է Վրաստան, Զավախեթիի երկրամաս, ապա անցել Գյումրի: Անցնելով Սարդարապատը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստանալով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ օգոստոսի 2-ին մուտք կգործի Հանրապետական մարզադաշտ:

«ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ

«Անչնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի օրենքն ուժի մեջ է մտել 2015 թվականի հուլիսի մեկից: Օրենքով կարգավորում են պետական կառավարման կամ ՏԻՄ-երի, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անչանց կողմից անչնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ 50 ՀԱԶԱՐՈՎ ԱՎԵԼԻ Է

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանը՝ «Հղիության՝ սեռով պայմանավորված ընդհատումն օրենքով կարգելվի. ի՞նչ ազդեցություն կունենա օրենքի կիրառումը» թեմայով քննարկմանը տեղեկացրեց, որ 1993-ից ի վեր Հայաստանում 50 հազարով ավելի տղա երեխա է ծնվել, քան աղջիկ:

«Սա դեռ ամուսնական շուկայում չենք տեսնում, ինչը կտեսնենք մի քանի տարի հետո, երբ 1993 թվականի ծնվածներն ավելի ակտիվ վերարտադրողական տարիքում կլինեն»,- նշեց բանախոսը:

2011թ. ՄԱԿ-ի ուսումնասիրությունների համաձայն՝ Հայաստանում 113 տղա է ծնվում 100 աղջկա հաշվով: Եվ այս ցուցանիշով Հայաստանը երրորդն է Չինաստանից ու Ադրբեջանից հետո, Հայաստանից մի փոքր հետ են Վրաստանն ու Ալբանիան: Ըստ Գարիկ Հայրապետյանի, սա նշանակում է, որ այս բոլոր երկրները «մեկ նավակի» մեջ են:

ՆՈՐԱՅՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ ՊԱՆԱՄԵՐԻԿՅԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ



Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան, հանահայտ ծանրորդ, օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն Յուրի Վարդանյանի որդին՝ Նորայր Տորոնտոյում ընթացող Պանամերիկյան խաղերում արծաթե մեդալակիր է դարձել:

ԱՄՆ-ի դրոշի ներքո հանդես եկող Նորիկ Վարդանյանը 94 կգ քաշային կարգում երկամարտի 362 կգ արդյունք է ցույց տվել՝ ամերիկացի Քենդրիկ Ֆարիսուին զիջելով 4 կգ:

Հիշեցնենք, որ 2012 թվականին Նորիկ Վարդանյանը Հայաստանի դրոշի ներքո հանդես գալով մասնակցել է Լոնդոնի Օլիմպիական խաղերին՝ զբաղեցնելով 11 հորիզոնականը (արդյունքը՝ երկամարտի 380 կգ):

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒԼԻՍ

18.07.2015. Սուրբ Թադեոս առաքյալի եւ Սուրբ Սանդուխտ կույսի հիշատակության օր

20.07.2015. Սուրբ Կիպրիանոս եպիսկոպոսի եւ Հուստիանե կույսի, Եվփիմե կույսի եւ 45 վկաների եւ Քրիստինե կույսի հիշատակության օր

21.07.2015. Աբանագինե եպիսկոպոսի եւ տասն աշակերտների նահատակության հիշատակության օր

23.07.2015. Սուրբ նախահայրերի՝ Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հովսեփի, Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Հեսոի հիշատակության օր

ԱՎԱՆԴՈՒՅԹ

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

2015 թվականի հուլիսի 12-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց հինգ տաղավար տոներից մեկը՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Վարդավառը կամ Քրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Տոնը նշվում է Սուրբ Զատիկից 98 օր հետո՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Իրոք, տոնի պատմությունը գալիս է դեռեւս հեթանոսական ժամանակներից: Հնում Վարդավառի տոնը կապում էին հայկական դիցարանի ջրի, սիրո, պտղաբերության ու գեղեցկության աստվածուհի Աստղիկի հետ: Վարդավառի տոնը նշվում էր ժողովրդական մեծ հանդիսություններով: Աստղիկին վարդեր էին նվիրում, աղավնիներ էին բաց թողնում եւ միմյանց վրա ջուր ցողում: Ջուր ցողելու սովորությունը պահպանվել է նաեւ մեր օրերում: Վարդավառի խորհուրդը եղել է նաեւ ջրի պաշտամունքը: Ջրին աղերսվող ծեսերն ունեցել են անձրեւ խնդրելու, հնարավոր երաշտը կանխելու նշանակություն:

Վարդավառին սովորաբար եկեղեցուն նվիրաբերել են հասկեր, աղերսել, որ արտերն ու այգիները զերծ մնան աղետներից, ծառերի դալար ոտերով զարդարել են տները, ծաղկեփնջեր նվիրել միմյանց, աղավնիներ թռցրել, կազմակերպել ջրախաղեր, զվարճություններ, խնջույքներ...

Այն Սուրբ եւ Անմահ Պատարագով նշանավորվեց Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում:

Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնի կապակցությամբ հետպատարգյան տոնական հանդիսություններ տեղի ունեցան Թբիլիսիի Սուրբ Էջմիածին, Ախալցիխեի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», Ախալքալաքիի «Սուրբ Խաչ», Նինոծմինդայի «Սուրբ Սարգիս», Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եւ Վրաստանի մյուս հայաբնակ շրջանների եկեղեցիներում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄՑԽԵԹԱՆ ՄՆԱՑ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Բոննում անցկացվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի 39-րդ նստաշրջանը, որի աշխատանքին մասնակցում էին Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարար Միխեիլ Գիորգաձեն, առաջին փոխնախարար Լեւան Խարատիշվիլին եւ մշակութային ժառանգության պաշտպանության ազգային գործակալության տնօրեն Նիկոլոզ Անթիձեն:

Վրաց պատվիրակությունը կոմիտեի նիստին ներկայացրեց Մցխեթայի պատմական հուշարձանների վերականգնման ուղղությամբ կառավարության կողմից իրականացվող միջոցառումները: Կոմիտեի նիստում նշվեց, որ, հաշվի առնելով ներկայացված հաշվետվությունը, 2016 թվականին հարկ է Մցխեթայի պատմական հուշարձանները դուրս բերել վտանգի տակ հայտնված հուշարձանների ցուցակից:

ՏԱՐԵՐՔ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵԾ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՆԱՍԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Թբիլիսիում տեղի ունեցած ավերիչ հեղեղումից վնասը, հաշվի առնելով տուժած կենդանաբանական այգու՝ նոր վայր տեղափոխումը, կազմել է շուրջ 90 միլիոն դոլար: Այդ մասին հայտարարեց Թբիլիսիի փոխքաղաքագլուխ Դմիտրի Կումսիշվիլին:

Թբիլիսիում սաստիկ տեղատարափ անձրեւ է տեղացել՝ կարկուտի եւ քամու ուղեկցությամբ, հունիսի լույս 14-ի գիշերը: Տարերքի մոլեգնության հետեւանքով վնասվել են բնակելի տներ, ճանապարհներ, ենթակառուցվածքային օբյեկտներ, լիովին ավերվել է Թբիլիսիի կեդանաբանական այգու տարածքը: Վերջին պաշտոնական տվյալներով, զոհվել է 19 մարդ, երեքը անհայտ կորած են համարվում: Նաեւ, ինչպես հաղորդում են Վրաստանի զանգվածային լրատվամիջոցները, կա 170 տուժած ընտանիք:

Կումսիշվիլու խոսքով՝ կենդանաբանական այգին կտեղափոխեն Վրաստանի մայրաքաղաքի ծայրամաս՝ Թբիլիսիի ջրամբարի շրջան: Նախկին կենդանաբանական այգու տարածքում կկառուցվի հանգստի զբոսայգի:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ԹԲԻԼԻՍԻ-ԲԱԹՈՒՄԻ ԳՆԱՑՔԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿԿՐՃԱՏՎԻ

Թբիլիսիից Բաթումի գնացքների ուղեւորության ժամկետը կկրճատվի գրեթե մեկ ժամով: Այդ նախագիծը, հնարավոր է իրականացվի 2019 թվականի վերջին: Նախագծի արժեքը կազմում է 260 միլիոն շվեյցարական մարկ:

Ինչպես տեղեկացրել են վրացական երկաթուղում, նոր երկաթգծի երկայնքով ծրագրվում է կառուցել վեց թունել: Թունելներից մեկի, 962 մետր երկարության ստորգետնյա անցումի բացումը կատարվեց հուլիսի 11-ին:

Երկաթուղում, վերակառուցքավորման շրջանակներում, աշխատանքներ են տարվում նաեւ Խաշուրի-Մոլիթի ճանապարհահատվածում էլեկտրաֆիկացման ուղու տեղադրման ուղղությամբ: Ծրագրվում է նաեւ 23 կիլոմետրանոց ճանապարհահատվածի վերանորոգում:

Վրացական երկաթուղում գտնում են, որ, վերոնշյալ նախագծի ավարտից հետո, երկաթուղում բեռնափոխադրումը տարեկան կհասցվի 65 միլիոն տոննայի, իսկ ազդանշանային կենտրոնացված եւ շրջափակման համակարգերի տեղադրմամբ, մինչեւ 123 միլիոն տոննայի:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Վրաց հանրահայտ գրող, «Ընձենավորի» հեղինակը (անունը): 6.Դերձակի գործիք: 9.Պ.Սեւակի գովերգած գյուղը: 10.Կրուժեւա (գրական հայերենը): 12.Մեծ աշխարհամաս: 14.Ձզվանք, ատելություն: 18.Դերանուն: 21.Գայլի գույնը: 23.Հերոս «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմում: 25.Վեդիի «պոչը»: 27.Թբիլիսահայ դաշնակահար ... Աբովյան: 20.Թբիլիսյան մանրավաճառ: 31.Ափերից դուրս եկած, վարարած, հորդ: 35.Արգելք, մղում, ազդ: 37.Մեսրոպյան այբուբենի տառ: 38.Ամայի, լերկ: 40.Վախ, դող: 41.Միքայելը մտերիմների համար: 42.Վիրահայ գրող Վ.Հունանյանցի «Վիլ-ժուիվ բուժարանի ...ն»: 45.Չհասած, տհաս: 47.Թուրքիայում լույս տեսնող հայկական պարբերական: 48.Անձնական դերանուն: 50.Հիդրոէլեկտրակայան: 52.Հայ անվանի դերասան ... Սարգսյան: 53.Ընտանի կենդանի: 56.Ծնողազուրկ, ծնողներ չունեցող: 58.Հայկական միրգ: 59.Աշխարհի ամենաերկար գետը: 60.Սատկած անասուն: 61.Լեռ պատմական Հայաստանում: 62.Էդգար Ալան ...: 63.Համեմունք՝ ե'ւ սարի, ե'ւ բանջարանոցային: 64.Ձիու ձագը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Երեւանում լույս տեսնող երգիծական ամսագիր: 3.«... հավը կչկչան կլինի» (ժող. առած): 4.1872-1921 Թբիլիսիում հրատարակված պարբերական: 5.«... տուր, ով ծովակ» (Ռաֆֆի): 7.Ուսանողական քննաշրջան: 8.Ձի, երիվար: 13.Գրական ստեղծագործության տեսակ: 15.Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու նախկին սպասավոր (անունը): 16.Անձնական դերանուն (սեռ. հոլով): 17.Ընկույզ, կաղին, ...: 19.Մսամթերք: 20.Հերոս Ստ.Զորյանի «Խնձորի այգին» պատմվածքում: 22.Հոգի, շունչ: 24.Երեւանի կենդանաբանական այգուց փախած փիղ: 26.Արեւելյան քաղցրավենիք: 27.Որսի կենդանի: 28.Խնկո Ապեր կամ ... Խնկոյան: 29.Հուլիոս ...: 30.Հնդկաստանի գործիչ Ջավահառլար ...: 32.Անահ, քաջ, արի: 33.Երեսին հասցրած հարված: 36.Չվերթ: 39.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասանուհի ... Քարաջյան: 43.Բովանդակություն, ցուցակ: 44.Օձի տեսակ: 46.Ավաղ, ափսոսանք: 49.Հովհ.Թումանյանի գյուղը: 50.Դերասան ... Թոխատյան: 51.Պետություն Ասիայում: 54.Անզարդ, պարզ, համեստ: 55.Ե'վ բարորակ, ե'ւ չարորակ: 57.Ռուս գրող Ալեքսանդր ...:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Սպանիել: 8.Կրեդո: 9.Խամ: 10.Ասքմա: 13.Ամենա: 18.Ոսոխ: 19.Սվալբարդ: 22.Անտառ: 23.Անեմիա: 28.Իդեալ: 29.Ամեհի: 32.Ժակ: 33.Ակոս: 34.Եփրեմ: 37.Ուտի: 39.Հոմս: 41.Անափ: 44.Ապատ: 46.Նոնա: 47.Իբն: 49.Հոն: 50.Նիկոլայ: 52.Մաշա: 54.Ֆիշեր: 55.Լանա: 56.Աջ: 57.Զարին: 58.Մեղա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հարթ: 2.Դիլա: 3.Էլխի: 4.ԲԿՄԱ: 5.Խերես: 6.Չոլախ: 11.Սավա: 12.Միլտ: 14.Մոպեդ: 15.Նոկիա: 16.Թառ: 17.Օդա: 20.Անբեկ: 21.Բազիս: 24.Նիկե: 25.Մետր: 26.Ալամ: 27.Ուժատ: 30.Մարո: 31.Հոգս: 35.Փչան: 36.Եղան: 37.Ումպ: 38.Իշտոյան: 40.Մանիշ: 42.Նովա: 43.Փարաջա: 44.Ագորա: 45.Ահալի: 48.Բնիկ: 51.Կեզ: 52.Մամ: 53.Շաղ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445